ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հոկտեմբերի 9-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, ուր նշանակվեցին թեմական նոր առաջնորդներ՝ ներքին թեմերի համար:

Նիստի ընթացքում, Վեհափառ Հայրապետի առաջարկով, տ. Վահան եպս. Տերյանը նշանակվեց Ադրբեջանի թեմի առաջնորդ, տ. Նարեկ եպս. Շաքարյանը, որը վարում էր Շիրակի թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնը՝ նույն թեմի առաջնորդ, և տ. Գևորգ եպս. Սերայդարյանը, որը վարում էր վրահայոց թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնը՝ նույն թեմի առաջնորդ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է ջերմորեն թեմական նորընտիր առաջնորդներին և նրանց բարեմաղթում թեմական բեղուն և արդյունավոր գործունեություն և պաշտոնավարություն՝ ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի և ի պայծառություն Հայաստանյայց առաքելական եկեղեցու:

*
* *

Հոկտեմբերի 11-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, հոգևոր ճեմարանում տեղի է ունենում մանկավարժական ժողով, ուր տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը զեկուցում է մեկ ամսվա ընթացքում կատարված ուսումնա-դաստիարակչական և կարգապահական հարցերի շուրջ: Տեսչական զեկուցագրի շուրջ մտքերի փոխանակությանը մասնակցում են դասախոսներից շատերը՝ անելով մի շարք օգտակար թելադրություններ և առաջարկներ:

Մանկավարժական ժողովից հետո Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Վեհարանում ընդունել տեսչին և դասախոսական կազմին և զրույց ունենալ նրանց հետ: Տեսուչ վարդապետը Վեհափառ Հայրապետին է զեկուցում մանկավարժական ժողովում քննված և ուսումնա-դաստիարակչական հարցերի վերաբերյալ ընդունված որոշումների մասին:

Վեհափառ Հայրապետը Իր գոհունակությունն է հայտնում ճեմարանում կատարվող ուսումնական, դաստիարակչական աշխատանքների մասին և այս առթիվ կատարում մի շարք օգտակար թելադրություններ՝ է՛լ ավելի կազմակերպված և արդյունավետ անցկացնելու համար 1973—1974 ուսումնական տարին ճեմարանի հարկի տակ:

*
* *

Հոկտեմբերի 14-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի ս. Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տորոնտոյի ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ժիրայր վրդ. Թաշճյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 21-ին, կիրակի.—Զ կիրակի զկնի ս. Խաչի.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Մայր Աթոռի միաբան և Լոնդոնի ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հոկտեմբերի 25-ին, հինգշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի տեսչի գլխավորությամբ ուսանողությունը և դասախոսական կազմը շրջապտույտի են մեկնում Մեծամոր, Սարդարապատի հուշարձանախումբ և Այոլի լիճ:

*
* *

Հոկտեմբերի 28-ին, կիրակի.—Է կիրակի զկնի ս. Խաչի. Գիւտ Խաչի.

Մայր տաճարում իր եպիսկոպոսական անդրանիկ պատարագն է մատուցում և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Շիրակի նորընտիր թեմական առաջնորդ տ. Նարեկ եպս. Ծաքարյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը: